ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 60) 80 80 03

էլ. փոստ info@moh.am

26.08.19 N ԱԱ/ԱՀ/13996-19

Ձեր N _____

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ,
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ՝ ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ info@hetq.am

Հարգելի պարոն Բաղդասարյան,

Ձեր 2019 թվականի օգոստոսի 19-ի հարցման կապակցությամբ հայտնում ենք. 1990-2018 թթ. ՀՀ բնակչության չարորակ նորագոյացություններով (ՉՆ) ընդհանուր հիվանդների, կյանքում առաջին անգամ ախտորոշվածների թվաքանակի վերաբերյալ և 2016-2017 թթ. մարզային կտրվածքով ըստ սեռատարիքային խմբերի տեղեկատվությունը հասանելի է ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջում (http://nih.am/am/subdivisions/health_analytical_center?block=statistical_yearbooks,աղ. 2չն.1-2չն.30):

2018թ. տվյալները ներկայացված են կից ֆայլում: 1990-2018թթ. ՀՀ բնակչության ընդհանուր մահացությունը ՉՆ-ից և 2015-2018թթ. մահացությունն ըստ սեռատարիքային խմբերի ներկայացված են աղյուսակներ 1.6-1.7-ում: 2014-2017թթ. ՀՀ բնակչության ՉՆ-ից մահացությունը մարզային կտրվածքով ներկայացված է ՀՀ մարզային առողջապահության վիճակագրական տարեգրքերում http://nih.am/am/subdivisions/health_analytical_center?block=statistical_yearbooks:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ մարզային կտրվածքով մահացության վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից տրամադրվել է 2013թ.-ից:

Ելնելով առաջին և երկրորդ կետերով հարցվող տեղեկատվության ծավալներից, (2004-2015թթ.) այն կտրամադրվի մեկ ամսվա ընթացքում:

Առդիր՝ 2 ֆայլ:

/ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

26.08.2019

X

VERIFIED OCSP 26.08.2019 11:10:17 GMT+4

Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416

Կատարող՝ ՀՀ ԱՆ ԱԱԻ
Առողջապահության տեղեկատվական
վերլուծական ազգային կենտրոն
Հեռ. 23 05 62

Կատարող՝ Ալինա Նիկողոսյան
Առողջապահության նախարարի մամուլի քարտուղար
հեռ. 060 80 80 03/1120